

ծախուեր է 84 փութ 3 փունդ 75 զալաթ. ծախսը հանելով մնացորդից և մուտքից կմնայ առ մէկն յունուարի 1893 ամի ընդամենը 15 փութ 25 փունդ 94 զալաթ. որը և փոխադրուեցաւ 1893 թուականի մատեանի մէջ:

Յ. Անցեալ 1891 թուականից մնացեր էր կիսայրեալ մոմ և կերոններ 5 փութ 30 փունդ 69 զալաթ. ստացուեր է եկեղեցւոյ տուփերից, ննջեցեալների, պսակների, և լուսաւորիայից յետ եկած 15 փութ. 33 փունդ 62 զալաթ. իսկ ծախուեր է և ծախուեր է եկեղեցոյ համար 8 փութ 1 փունդ 39 զալաթ. ծախսը հանելով մնացորդից և մուտքից կմնայ առ մէկն յունվարի 1893 ամի 13 փութ 22 փունդ 92 զալաթ. որը և փոխադրուեաւ 1893 թուականի մատեանի մէջ,

Երեցփոխան Ախալցիսայի Ս. Փրկիչ եկեղեցւոյ Հայոց.

Կոլլէժսկի Սօվէթնիկ Տիգրան Տէր Միքայէլեանց:

Թ Ռ Ի Զ Ֆ Ե Ւ Ճ Ա Խ Ի Ր .

Անցեալ տարուայ սեպտ. ամսում՝ Լիւցերնում «Հին-կաթոլիկաց» եկեղեցական ընդհանուր ժողով տեղի ունեցաւ. Այդտեղ էր և Թէոդոր Խսահակի, Նախկին «Հայաստանեայց եկեղեցի» ամսագրի խմբագիրն. որ Երուսաղէմի ուսուցչութիւնը թողնելով՝ գնումէր Հնդկաստան՝ ի Ալկաթայ Անդլիական «Հայոց Ճեմարանում (Armenian Academy) Հայերէնի ուսուցիչ լինելու.

Ժողովում վճռուել էր մի եռամսագիր հրատարակելու, որի առաջին համարը լոյս է տեսել. (Էջ. 1—150. 8°) Revue internationale de théologie. ունի Գրանսերէն, Գերմաններէն և Անգլիերէն յօդուածներ, նշանաւոր են պրօֆեսոր գոկտոր Ռայնկենս եպիսկոպոսի յօդուածն աշխարհիս արարչադրութեան վրայ, որի թարգմանութիւնը կտանք «Արարատի» ընթերցողներին. պրօֆ. գոկ. Միշօնի La Théologie et le Temps présent. (աստուածաբանութիւնն և արդի ժամանակը), և այլն. Աերջինս նա է, որ ի Պարիզ Մատրլայն եկեղեցում բարձր պաշտօն ունէր, սակայն պապի անսխալականութիւնը մերժելով եկաւ Բերն մոլորութեան դէմ գործելու. Սորա մի հռչակառ հեղինակութիւնը լոյս տեսաւ ի Ս. Էջմիածին 1878-ին հանդուցեալ Այվաղեան ուսումնասէր եպիսկոպոսի թարգմանութեամբ՝ «թէ ինչպէս հռովմէական եկեղեցին ոչ ևս է կաթուղիկէ եկեղեցի», որ վաղուց պէտքէ վաճառուած պրծուած լինէր:

Ցիշեալ եռամսեայ հանդէսի գինն է 16 ֆրանկ տարեկան. հասցէ՝ Մ-ր le Professeur Michaud, 17, rue d' Erlache. Berne (Suisse).

Յայտնի է որ Գերմանիայում ինչպէս և ուրիշ շատ տեղեր եզուկոններ. թի օրդեններն արգելուած են: Այժմ՝ Հռովմէականները դարձեալ խնդիր են բարձրացնում Բերլինի Բայխստագում՝ թոյլատրելու դոցա մուտքը պետութեան մէջ: Ժողովուրդը ստորագրութեան համար շրջեցնումէ, ինչպէս հաղորդում են լրագրները: Հետևեալ խնդիրը:

«Բարձր Բայխստակի, Անդրլեռնականաց (Հռովմէականաց) կողմից դարձեալ ձգտում են եզուիթների օրդենները ներս թողնել Գերմանական պետութեան մէջ թէև Զ տարի առաջ մի միլիոնից աւելի Գերմաններ բացէ ի բաց դորա դէմ խօսեցան: Պատմութեան վկայութիւնք և երկրների դրութիւնք, որտեղ նոքա այսօր ևս դործում են, տարակոյսի տեղիք չեն տալիս դոցա ապականիչ դործունէութեան մասին: Եթէ Գերմանիայում ներս թողնուի եզուիթների օրդենը, կվնասէ կրօնական խաղաղութեան և ազգութեան միութեան, նոյնպէս և Եւրոպական խաղաղութիւնն ապահովող եռապետական դաշնագրութեան հիմնաքարին: Ուստի ներքոյ ստորագրեալք ներկայացնում են խնդիր առ բարձր Բայխստագը, անհետևանք թողնել՝ եզուիթների վերստին ներս թողնելու առաջարկութիւնը»:

Սակայն Բերլինի արքունիքից անբաւական են մնում: Կորերս Հրատարակուց Կեօլնի լրագրում՝ գեներալ «Մոլթիկի խօսակցութիւնն թէոդոր Ֆոն Բերնհարդի՝ հետ», որտեղ առաջինը համեմատումէ բողոքականութիւնը Հռովմէականութեան հետ և վերջինիս խաւարամտութիւնը Ճարահատեալ լաւագոյն համարում քան առաջնի ծայրահեղութիւնն, որ զգալի է մանաւանդ կարճամիտ քարոզիչների մէջ: Բողոքականութեան այդ վիճակը գրեթէ ողբումէ և Հալլէի պրօֆ. Բայշլագ իւր ամսագրի առաջին համարի մէջ: «Հին կաթոլիկներն» որոնք ձգտում են իւրեանց հակահովմէական եկեղեցին ըստ արեւելեան եկեղեցեաց կարգաւորելու և մինչև անգամ քահանաների ամուրիութիւնը վերացրել են, ասում են. «Երբ է Հռովմէան ժողովրդին համար օրհնանք եղել»:

* * *

Մատենագարանիս քանի մի գրչագրաց մէջ գտնում ենք Մովսէս Խորենացու պատմութիւնից վերցուած յօդուածների շաբքում հետևեալ գեղեցիկ ներբողն եկեղեցու վրայ: որի յառաջադիր սկզբնատառերը կազմում են «Մովսէսի է սա»:

Մարգարէից սա սերմանումն

Եւսաքելոց պատղարերեալ:

Ողորմութեամբ Տեառն շնորհիւ

Արժանացեալ եկեղեցի:

Վարդապետաց վարժեալ բանի,

Մատուռակեն մատաղ մանկանց:

Սրբամաքուր մտաց սնունդ:

Ի յուղղագոյն թելագրաւթիւն:

Էին լրմամբ և եռանձնեայ,
Միշտ ճոխացեալ մանկունք Բամբշի.
Սերովբէից արքայն երկնի,
Մատոռւակեալ ըստ արժանի:
Յիմանալի ներկս լեզուի
Առաքելոց հանգանակի:
Ի սղոց սրումն հրաշալի
Գեր քան զհիւսիսեանն Զաքէի:
Ի փառս Փրկչի Տեառն Յիսուսի.

Եմէն ամէն և եղիցի:
Ե տիրապէս գանձ գովելի
Որ է պատուեալ յեկեղեցի:
Սիրով սիրոյն հօրն բարի
Ի փրկութիւն մարդկան ազգի:
Արգասաւոր և բաղձալի
Ի պէտս հանուրց պտղաբերի:
Տէրն է օրհնեալ յամենայնի
Եւ յաւիտեան որ եղիցի.

* *

ԳՐԻԳՈՐԻԱՆԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԳՐԱՎՐԱՑ ՄԷջ ԳՏՆՈՒՄ ԵՆՔ.

Գոյ յիս գիտութիւն,
Բայց խամբացեալ է:
Գոյ երկիւղ բարեաց,
Այլ շիջանի միշտ:
Ե յիս և հոգի՝
Բայց տկարացեալ է:
Աւմիմ ես լոյս պայծառ,
Բայց խաւարեալ է:
Կայ և հուր սիրոյ,
Բայց սառուցեալ է:
Եւ հողմն քաղցրասիդ,
Խորշակահար է:
Զերմերմ ես առ Աստուած,
Այլ ջուրն մերձ է:
Կամիմ բուսուցանել,
Բայց տօթն չար է:
Խոստացաւ ինձ չարչարանք,
Եւ ընկալայ զայն:
Ասաց և հաշտութիւն,
Այլ չկամեցայ զայն:
Ի հնգից զիս բաժանեաց,
Եւ չիմացայ զայն:
Հրաւէր ետ և բարեաց,

Բայց չզգացի զայն:
Ի սնոտիս յայս խարեցայ,
Որպէս տկար ոք:
Ի յունայնս այս պարտեցայ,
Իրր ի կայուն ինչ:
Զաշս կափուցի,
Եւ այն կամաւս իմ:
Ի քուն մտի մեղաց,
Եւ հեշտացայ յայն:
Այլ երր զարթնուցում:
Եւ հատուցի ինձ:
Բայց յոյս ետ մեղանաց,
Եւ ես գտի զայն:
Ատել ասաց զյանցանս,
Եւ գովեցի զայն:
Բարի և զողորմելն,
Եւ կատարեայց զայն:
Սիրելն անձառ բարի,
Եւ զայն ուսոյց նաւ:
Ի թողուլ պարտապանին,
Եթող և մեզ նաւ:
Թողէ Յիսուս բազմաց,
Զոր պահանջեաց նաւ:

* *

Անցեալ տարի լոյս տեսաւ 24 հրատարակութեամբ Քերլինի համալսարանի աստուածաբանութեան պրօֆ. Հարնակի մի փոքրիկ գրքովկը՝ Հռովմէական աշխարհում դարրնուած՝ առաքելական անուանուած հաւատամքի անհարազատութեան մասին։ Հայոց եկեղեցին ևս չէ ճանաչում այդպիսի մի հաւատամք։ Հարնակի այդ գրքոյն ահազին աղմուկ է հանել ի Գերմանիայ, մանաւանդ որ այդ հաւատամքը յերարկումէ նոյն իսկ «բողոքական» եկեղեցում՝ իրրև առաքելական։ Փամանակ առ ժամանակ այդ գրքոյնից հաղորդումներ կանենք, առ այժմ յիշեմ որ Theologische literaturzeitung երկշաբաթաթերթը քանի մի գրքոյներ է յիշում արգէն այդ հարցի մասին հրատարակուած, որոնց հետեւանքի մասին ուրիշ տոթիւ։

* *

Ենայի համալսարանի աստուածաբանութեան յայտնի պրօֆ. եկեղեցական խորհրդական Հիլգենֆելդի գիտնական աստուածաբանութեան ամսագրի՝ վերջին տետրում հրատարակել է իմ բարեկամ պրօֆ. Գելցերն, որ այնքան սէր ունի գէպի Հայոց պատմութիւնն ու եկեղեցին, Հայոց եկեղեցու բոլոր թեմերի ցանկը, վերցնելով Կ.Պոլսի «Փրկչեան հիւանդանոցի» անցեալ տարրուայ օրացոյցից։ Ուուսաստանի Հայոց թեմակալների և Սինոդականների անուններն ևս գրել է։ Այդ յօդուածի սկզբում (Der gegenwärtige Bestand der armenischen Kirche) ասումէ Հայոց, որոնց լիովին հակառակ տեղական յիրարկութեան Գրիգորեան են կոչումն ուրիշագետութեան և եկեղեցական կաղմակերպութեան մասին խիստ անբաւար տեղեկութիւն ունին։ Ուստի պատշաճ համարեցի նշանաւոր և հարազատ հայեացք Հայոց ամրող կաղմակերպութեան վրայ-բնականաբար՝ որոնք Հուովմայ հետ միացած չեն—այսուեղ ընթերցողների առաւել մեծ շրջանի մատչելի անել։

* *

Նոյն բարեկամն հաղորդումէ, «Օգոստոսի մէջերին պրօֆ. Լեպսիուսը մեռաւ, նա մի վերահատութիւն (օպերացիա) անել տուաւ պրօֆ. Ռիտելի բուժաբանում սկզբում լուր անցնել երեցաւ յետոյ յանկարծ արիւնահոսութիւն սկսուեց, որից և մեռաւ, Այդ մեզ համար անփոխարինելի կորուստ է և այդպիսի մի նշանաւոր անձն այլ ևս գֆուար թէ վերստին ստանանք»։

Հանդուցեալը Հայաստանեայց եկեղեցու անենաջերմ յարգողներից մէկըն էր և գրել է Պերումնայի պատմութեան քննութիւնը, Ցաւալի մայ՝ 60 տարեկան հասակում։

Ա. ՏԵՐ-ՄԻՔԵԼԵԱՆ.

⁴ Die Edessinische Abgorsoge.